ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/4» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.03.2016թ. ժամը 10^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Վ. Մկրտչյանը, Վ.Հարությունյանը, Ա. Մամյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/4» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱրմենՏել» ՓԲԸ (ք. Երևան, Ահարոնյան 2)**

2. **«Ցուքոմ» ՍՊԸ (ք. Երևան, Տերյան 19, բն. 4)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 31.03.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **«Ցուքոմ»** ՍՊԸ կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.2. **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ Հավելված 1-ի. «ԱրմենՏել» ՓԲԸ -ի կողմից Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Հավելված 1-ի՝ ընթացակարգին մասնակցելու դիմումի փոխարեն կցվել է Հավելված 4-ը՝ Գնի առաջարկը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«Յուքոմ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:
3.2 **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից ներկայացված մնացած փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 01.04.2016թ. ժամը 12:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Վ.Հարությունյան

_____ Ա. Մամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

« ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/4» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.04.2016թ. ժամը 12^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Վ. Մկրտչյանը, Վ.Հարությունյանը, Ա. Մամյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. **Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.**

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված 1-ը և լիցենզիան: Փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	**Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/**	
		«Յուքոմ» ՍՊԸ*	**«ԱրմենՏել» ՓԲԸ**
1	**Ինտերնետային կապի ծառայություն**	90000	530370
2	**Ինտերնետային կապի ծառայություն**	60000	640000

* **«Յուքոմ» ՍՊԸ-ի** ներկայացրած գները ցածր են հայտով նախատեսված առավելագույն գնի 75տոկոսից:

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1-2 չափաբաժինների համար **«Յուքոմ» ՍՊԸ -ին:**

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1-ին չափաբաժնի համար **«ԱրմենՏել» ՓԲԸ-ին:** 2-րդ չափաբաժնի համար **«ԱրմենՏել» ՓԲԸ-ի** գինը գերազանցում է նախահաշվային գինը:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Վ.Հարությունյան

_____ Ա. Մամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան